ողջ ունեցվածքը, իսկ մնացածը մազապուրծ եղած գնացին իրենց տեղերը:

Սինչղեռ Թահմազ բեկը Այաղլուսարայում էր, եկավ մի այլ գույժ, թե ահա օսմանցիների մի գունդ Կարսից ելել, եկել հասել է Կվաշ և Վժան[89] ՝ Արագածի լեռոտներում և կամենում է գնալ Կարբի[90]: Թահմազը այս լսելով, բոլոր գերիներին, սպանվածների գլուխներն ու ավարը ուղարկեց իր հայր Ամիրգունա խանին, իսկ ինքը չգնաց, այլ առնելով զորքը, նույն երեկոյան գնաց Նորագավիթ գյուղը: Այնտեղ ձիերը կշտացրին և աքլորականչին ելան ու անցան Հրազդան գետը, որ Ջանգուն է, բռնեցին առապարը, առանց ճանապարհի հասան Օշականից վեր և անցնելով Քասաղ[91] գետը այգիներից ներքև, որ կոչվում է Կարբիի դաշտ: Անցան գնացին և հասան Վժանի հանդը և տեսան օսմանցիներին: Պատերազմի փողը հնչեցրին, և խառնվեցին միմյանց պարսիկներն ու օսմանցիները: Օսմանցիների ձիերը պարսից փողերի ձայնին վարժ չէին, երբ փողերը հնչեցին (օսմանցիների) ձիերը սկսեցին փախչել, իսկ պարսիկներն ընկան նրանց հետևից և հալածեցին նրանց: Բայց Թահմազ բեկը մոլորված ու կտրված իր զորքերից, միայնակ գնում էր: Եվ ահա երեք օսմանցի հեռվից տեսան նրան և իմացան, որ պարսիկ է, բայց չիմացան, թե ով է և գողունի ընկան նրա հետևից: Բայց նա ուներ կիսաբանական զորավոր մի ձի, որին անվանում էին Ղազիգիեր (աշխետ հերոս): Փախչելով օսմանցիների առջևից, ահա հանդիպում է մի փոսի, որի լայնությունը քսանչորս թիզ, իսկ խորությունն ու երկայնությունը անչափ: Մտրակելով՝ ձին շեշտակի թափ առավ ու թռավ անցավ այն կողմը և կանգնեց ոտքերի վրա, Թահմազը իջավ, համբուրեց ձիու աչքերը, և գնալ գալով գտավ զորքը, հաշվեցին, տեսան, որ զորքից պակասում է վեց մարդ, իսկ իրենք ունեն կապված (գերի) հինգ հոգի և (կտրված) գլուխ՝ երեք: Առան գնացին Երևան՝ խանի մոտ, և երկու պատերազմները նկարագրեցին, պատճենը տվին սուրհանդակի ձեռքը և ուղարկեցին շահին:





## ԳԼՈՒԽ ԼԵ
### *ԱՄԻՐԳՈՒՆԱ ԽԱՆԻ ՄԱՀԸ*

Երբ Թահմազ բեկը իր զորքով գնաց, բայց ոչ Ղոռչիբաշու հրամանով, այս վերջինը մահու չափ խոր վիրավորվեց՝ նախատինք համարելով իրեն: Սա ևս գրեց գանգատագիր Թահմազ բեկից և սուրհանդակի միջոցով ուղարկեց շահին: Այնպես պատահեց, որ երկու սուրհանդակներն էլ՝ Ղոռչիբաշունը և Թահմազ բեկինը, միևնույն օրը մտան շահի մոտ: Երբ գրությունը կարդաց, իմացավ, որ Ղոռչիբաշին նախանձից է գրել, ուստի բանի տեղ չդրեց Ղոռչիբաշու ասածները: Իսկ Թահմազ բեկինը ընդունեց և գովեց նրան: Եվ նամակ գրեց, հանձնեց նույն սուրհանդակին: Նամակի պատճենը հետևյալն էր: «Հրաման է մեր թագավորությունից առ քեզ, Թահմազ բեկ, որ եթե քո հայրը մեռնի, թաղիր, իսկ եթե ապրի, թող մնա այդտեղ, կամ թող գա ինձ մոտ, կամ լուռ նստի, իսկ խանություն դու արա»: Երբ Թահմազը այս լսեց, իսկույն սպանեց իր հորը: Ոմանք ասում են լարով խեղդեց, ոմանք էլ ասում են՝ բարձը դրեց բերանի վրա և նստեց վրան՝ շնչարգել անելով նրան, և մեռավ: Ոմանք էլ ասում են՝ իր մահով մեռավ վերքի սաստկությունից, քանզի բժիշկները չկարողացան բուժել: Որովհետև որքան դեղեր էին դնում, վերքն ավելանում էր, և կսկծից մեռավ:

Այսպես թե այնպես կյանքից հեռացավ քաջ ու արի Ամիրգունա խանը՝ խարտյաշ առյուծը: Նրա տեղը գրավեց նրա որդին՝ Թահմազ բեկը և նստեց իբրև խան ծանր իշխանությամբ: Բայց ես տարակուսանք ունեմ սրա մասին, քանզի Առաքել պատմագիրն ասում է, թե երբ Ամիրգունա խանը խոցվեց, սրա որդի Թահմազ բեկը շահի մոտ էր: Իսկ շահը երբ լսեց Ամիրգունա խանի վիրավորվելը, որդուն ուղարկեց հոր մոտ, որ երկիրը կառավարի: Իսկ տարածված լուրը այն էր, ինչ գրեցինք, քանզի կարծում եմ՝ լուրը ճիշտ էր: Քանզի ես մանուկ էի, երբ ասում էին, թե ահա Թահմազն եկավ Վրաստանից: Քրդերից ոմանց բռնեցին, շղթայակապ բերին Քանաքեռ, պահ տվին: Մեզ էլ տվին ոմն Լկիլկի անունով մեկին, որ հայերեն գիտեր, սա մեզ պատմեց պատերազմի մասին: